

« Կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/3

6 սեպտեմբերի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2012թ-ի նիստում քննության է առնվել «Յումի» ՓԲԸ 03.08.2012թ. դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.07.2012թ. թիվ 1011913/1 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 03.05.2012թ. թիվ 1011913/1 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասության սահմաններում «Յումի» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 25.07.2012թ-ին կազմվել է թիվ 1011913/1 ակտը (այսուհետ նաև ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 681.200 դրամ:

Ընկերության գանգատը վերաբերում վերստուգման արդյունքում լրացուցիչ գանձման առաջադրված սոցիալական ապահովության վճարի գումարին: Մասնավորապես, ակտի 16-րդ կետով արձանագրվել է, որ հիմք ընդունելով « օստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի Մաշտոցի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Սմբատյանի կողմից տրամադրված նյութերը և համադրելով ստուգվող ժամանակաշրջանում առկա աշխատանքային պայմանագրերը ու որոշումը, օստիկանության Մաշտոցի բաժնում Վարդանուշ Ռազմիկի Վարդանյանի, Արմինե Աֆտանդիլի Ավետիսյանի, Աշխեն Վիտյայի Թորոսյանի, Սերգեյ Հովհաննեսի Եվանգուլյանի, Սեդա Ալեքսանի Սիրունյանի տրված հայտարարություններն այն մասին, որ նշված անձինք աշխատել են «Յումի ՀԶ» ՍՊԸ-ում համապատասխանաբար՝ Վարդանուշ Ռազմիկի Վարդանյանը 2010թ-ի նոյեմբերի 25-ից մինչև 2011թ-ի հունիսի 17-ը, Աշխեն Վիտյայի Թորոսյանը 2009թ. նոյեմբեր կամ դեկտեմբեր ամիսներից մինչև 2011թ. հունիսի 17-ը, Սերգեյ Հովհաննեսի Եվանգուլյանը 2010թ. սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսներից մինչև 2011թ. մարտ ամիսը, Սեդա Ալեքսանի Սիրունյանը 2010թ. օգոստոսից մինչև 2011թ. օգոստոսի սկիզբը առանց գրավոր աշխատանքային պայմանագրերի, հիմք են տալիս արձանագրելու այն մասին, որ թվով 5 (հինգ) աշխատողի աշխատանքի ընդունումն աշխատանքի անցնելիս չի ձևակերպվել « օրենսդրությամբ սահմանված կարգով, չի կնքվել գրավոր աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման իրավական ակտ: Խախտվել է « Աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները:

Հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները 5 վարձու աշխատողի համար լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճար: Նշված խախտումները թույլ են տրվել մինչև 2012թ. հունվարի 1-ը:

Նախորդ՝ 2011թ. հոկտեմբերի 25-ի թիվ 1100828 ակտով արձանագրվել է թվով 1 չձևակերպված աշխատող (քաղ. Վալերի Բաղդամյան), որի համար 60.000 դրամ սոցիալական ապահովության վճար է առաջադրվել:

«Յումի» ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունը հայտնում է իր անհամաձայնությունը միայն ակտի 16-րդ կետում արձանագրված փաստերին այն պատճառաբանությամբ, որ «Աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտությունը» ստուգելու և արձանագրելու համար հարկային մարմնի կողմից հիմք է ընդունվել « օստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի Մաշտոցի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Սմբատյանի կողմից տրամադրված նյութերը, որոշումը, ստուգվող ժամանակաշրջանում առկա պայմանագրերի, Մաշտոցի բաժնում տրված գրավոր հայտարարությունների հետ համադրումը և ղեկավարվելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 6-

որ հողվածի 6-րդ կետի դրույթներով, ստուգմամբ արձանագրվել է 5 (հինգ) վարձու աշխատողի համար գանձման ենթակա 300.000 դրամ սոցիալական ապահովության վճար: Սակայն հարկ է նշել, որ ընկերությանը սահմանված կարգով չեն տրամադրվել վերը նշված համապատասխան նյութերը, որոշման օրինակը, ինչը հնարավորություն կտար ծանոթանալ դրանց հետ և հայտնել ընկերության դիրքորոշումը, այն է՝ առարկել փաստերի դեմ, ներկայացնել լրացուցիչ ապացույցներ: Բացի դրանից, ակտի 16-րդ կետում նշված է 5 աշխատողների կողմից տրված հայտարարությունների մասին, սակայն արձանագրված է 4 աշխատողների աշխատելու ժամանակահատվածների մասին: Այսինքն՝ անկա են հակասություններ ներկայացված փաստերի, փաստական հանգամանքների միջև:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ակտի 16-րդ կետը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ակտի 16-րդ կետում հիշատակված փաստաթղթերը (քննիչի որոշումը, քաղաքացիների հայտարարությունները) վերստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ծանոթացվել են ընկերությանը: Նշված հանգամանքն ընդունեցին նաև ընկերության ներկայացուցիչները: Վերջիններս նշեցին, որ ընկերության գանգատը վերաբերում է ակտում հիշատակված քաղաքացիների հայտարարություններին և քննիչի կողմից կայացված որոշմանը:


Քննարկվող դեպքում պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով լրացուցիչ պարտավորությունների առաջադրման համար, ըստ էության, հիմք են հանդիսացել « Ծախսերի հաշվարկի մասին» ՀՀ Երևան քաղաքի Մաշտոցի քննչական բաժնի ավագ քննիչի կայացրած որոշումը, ոստիկանության Մաշտոցի բաժնում ակտում հիշատակված քաղաքացիների տրված հայտարարությունները: Այսինքն, ակտում հիշատակված թվով հինգ քաղաքացիների ընկերությունում առանց « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված փնտրու աշխատելու փաստը պարզվել և հիմնավորվել են Մաշտոցի քննչական բաժնում քննվող քրեական գործով իրականացված նախնական քննության ընթացքում, որը և հիմք է հանդիսացել ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց կողմից խախտումն արձանագրելու համար:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ակտը թողնել անփոփոխ:
Որոշմանը՝ չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ԱՐՐՍԵԱՆ